Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ, ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(28 մայիսի, 2014 թ.)

Մեծարգո Նախագահ,

Պատվարժան դեսպաններ եւ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ,

Պատվարժան պետական այրեր եւ սիրելի ներկաներ,

Հանրապետության օրվա այս փոնական օրը ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ:

Այսօր մեր ժողովուրդը ոգեկոչում է 1918 թ., Առաջին համաշխարհային պատերազմի դժվարին ժամանակաշրջանում Արեւելյան Հայաստանի փոքրիկ մի հատվածի վրա Հայաստանի Հանրապետության հաստատման հիշատակները: Գերագույն ջանքեր գործադրելով՝ մեր ժողովուրդը դիմակայեց ժամանակի քաղաքական թոհուբոհերին, մեր երկրում ստեղծված աղետալի իրավիճակներին եւ համախմբելով իր ուժերը՝ կարողացավ կանգնեցնել եւ ետ մղել թուրքական հարձակումը դեպի Երեւան ու Արեւելյան Հայաստանի շրջաններ:

Հայրենիքի համար անձնուրաց պայքարի եւ միասնության այդ օրինակը ծնունդ առավ յուրաքանչյուր հայի հոգուց: Ծանր իրավիճակի առջեւ հավատքով զինվելու, ոտքի կանգնելու, միաբանվելու կոչով ժողովրդին դիմեց Գեւորգ Ե. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ինքը եւս մերժելով իր ապահովությունը եւ չլքելով Սուրբ Էջմիածինը: Ապավինած Աստծուն՝ մեր ժողովուրդը միայնակ պաշտպանեց վաղնջական իր Հայրենիքում ազատ ապրելու իր իրավունքը: Հաղթանակեց հավատքի, միասնության, հայրենասիրության, նվիրումի ազնվասիրտ ոգին, որն այսօր մենք կարեւորում ենք՝ նշելով Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի եւ Հանրապետության հաստատման հիշատակները: Այդ ոգին պիտի օգնի մեզ այսօր դիմակայելու մեր կյանքի դժվարությունները, հաղթահարելու մեր երկրի առջեւ ծառացած խնդիրներն ու հրամայականները:

Այսօր Մենք փառք ենք մատուցում Աստծուն, որ մեր ժողովուրդը միայնակ չէ արդար իր իրավունքների պաշտպանության գործում: Երկրներ ու ժողովուրդներ, միջազգային կառույցներ դատապարտում են Հայոց Ցեղասպանությունը եւ ջանքեր բերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մեր ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքի ճանաչման հարցում, որի համար՝ հանձին

այստեղ ներկա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների, Մենք վերստին գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում մեր ժողովրդին աջակից երկրներին:

Այս տարի մարդկությունը պատերազմի չարիքը մերժելու եւ դատապարտելու զգացումներով հիշատակում է 100-ամյա տարելիցը Առաջին համաշխարհային պատերազմի: Յավոք, աշխարհում այսօր էլ հնչում են պատերազմի ձայներ, մեր ժողովուրդը նույնպես ապրում է փխրուն խաղաղության պայմաններում, նաեւ կրում է դժվարություններ պատերազմական իրավիճակում հայտնված երկրներում: Մեզ համար կարեւոր է, որ հակամարտություններն ու խնդիրները կարգավորվեն խաղաղությամբ, որի հաստատման եւ ամրության համար անհրաժեշտ է, որ զորանան արդարության, մարդկանց եւ ազգերի իրավունքների հարգման ճանապարհները:

Մենք աղոթում ենք աշխարհի խաղաղության, պատերազմական իրավիճակում գտնվող երկրների, հատկապես՝ Մերձավոր Արեւելքի ժողովուրդների համար, որպեսզի իրագործեն ապահովության, լուսավոր գալիքի իրենց ձգտումները: Աղոթում ենք Հայաստանի եւ մեր ժողովրդի խաղաղ կյանքի, Աստծո օրհնությամբ մեր ջանքերի արդյունավորման համար՝ հանուն մեր երկրի առաջընթացի, բարօրության ու հզորության:

Հայցում ենք, որ Աստված զորակից լինի բոլորիս մեր կոչման ու պատասխանատվության մեջ, լուսավորի եւ առաջնորդի Իր իմաստությամբ ու հաստատուն պահի խաղաղության, սիրո, բարության ճշմարիտ ուղիներում: Մաղթում ենք, որ Տերը օրհնի Հայաստանը հզորացնելու Ձեր ծրագրերը, մեծարգո Նախագահ, հարգարժան պետական այրեր եւ Ձեր առաքելությունը, մեծարգո դիվանագետներ՝ հանուն աշխարհում խաղաղության ամրապնդման, երկրների ու ժողովուրդների մեջ բարեկամության եւ համերաշխ գործակցության արգասավորման:

Թող ողորմությունն ու շնորհներն Աստծո միշտ մեզ հետ լինեն եւ համայն մարդկության՝ այսօր եւ միշտ. ամեն: